ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«06» հունիսի 2017թ. N 31-Ն

## ՆՈՐՄԱՏԻՎԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման 18-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի նիստի N 8 արձանագրային որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ 04 բաժնի 08 խմբի 04 դասի «01. Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին 2017 թվականին իրականացվելիք միջոցառումները՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ 04 բաժնի 08 խմբի 04 դասի «01. Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին 2017 թվականին իրականացվելիք միջոցառումների ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ղուլարյանի վրա:

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

«06» հունիսի 2017 թ.
ք.Երևան

Հավելված N 1
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական
կոմիտեի նախագահի

06 Տարրի 2017թ.
N 31-Ն հրամանի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 04 ԲԱԺՆԻ 08 ԽՄԲԻ 04 ԴԱՍԻ «01. ՆՈՐՄԱՏԻՎԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ» ԾՐԱԳՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| Հ/Հ | Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում | Նպատակը | Պատասխանատու մարմինը | Արդյունքը | Կատարման ժամկետը | ՀՀ պետական բյուջեից 2017 թվականի ֆինանսավորում (հազ. Դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. | Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց | ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 28-ի N 16-29 արձանագրային | ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշ | Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման | 2017թ. | 6000.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու (ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածուի մշակում), (տեղայնացում) | որոշման 3-րդ կետ | ինության պետական կոմիտե | կանոնների հավաքածուն ի լրումն է ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերին: Կանոնների հավաքածուն մանրամասնելու է շինարարական նորմերի դրույթները, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար բնակելի, հասարակական, արտադրական և այլ գործառական նշանակության մատչելի շենքերի և շինությունների հատակագծային տարրերի, դրանց տեղամասերի, մուտքային հանգույցների, տարհանման ուղիների, աշխատատեղերի սենքերի հաշվարկային, ինչպես նաև գրաֆիկական նյութերին ներկայացվող պահանջներն ու չափանիշերը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 61/106 Կոնվենցիայի սկզբունքներին համապատասխան: Այն հնարավորություն կտա հաշմանդամություն ունեցող անձանց լիակատար և արդյունավետ մասնակցություն ապահովել | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | հասարակության կյանքում՝ մյուսների հետ հավասար:<br>Փաստաթղթի մշակմամբ ապահովվելու են հաշմանդամություն ունեցող անձանց շենքերին ու շինություններին անարգել մոտեցման և շենքերի ներսում տեղաշարժման պահանջներն ու պայմանները: | | |
| 2. | Հասարակական շենքեր և շինություններ (ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում) | Ելնելով<br>1. Առողջապահության, սպորտի, հանգստի և ժամանցի համար նախատեսված շենքերի և շինությունների,<br>2. Պատմության և մշակույթի հուշարձանների, արվեստի շենքերի և շինությունների,<br>3. Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքերի և շինությունների,<br>4. Կոմունալ տնտեսության | ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե | «Հասարակական շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմերի մշակումը նպատապաուղղված է հանրապետության տարածքում ներկայումս գործող ՍՆիՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և կառուցվածքներ» շինարարական նորմերով սահմանված դրույթները նոր կառուցվող և արդիականացվող հասարակական շենքերին ներկայացվող ժամանակակից պահանջներին համապատասխանեցմանը:<br>Նոր շինարարական նորմերի մշակմամբ (տեղայնացում) սահմանվելու են տարբեր գործառական նշանակության շենքերի ու շինությունների նախագծման որակի բարձրացման, էներգետիկ ծախսի իջեցման, շահագործման | 2017թ. | 2000.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | շենքերի և շինությունների համար պահանջների սահմանման անհրաժեշտությունից | | բնութագրերի միասնական մեթոդով որոշման, ինչպես նաև անվտանգության ռիսկերի նվազեցման պահանջներ ու պայմաններ: | | |
| 3. | Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ<br><br>(ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում) | Հաշվի առնելով բետոնի և ամրանների դասակարգման փոփոխությունները և նոր տեխնոլոգիաների կիրառմամբ շինարարության արդիականացման պահանջները | ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե | «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» ՀՀ շինարարական նորմերի մշակումը (տեղայնացում) նպատակաուղղված է հանրապետության տարածքում ներկայումս գործող ՍՆիՊ 2.03.01-84* «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերով սահմանված դրույթները նոր նախագծվող, կառուցվող և արդիականացվող շենքերի ու շինությունների, ինչպես նաև հանրապետությունում արտադրվող շինանյութերի կիրառմանը ներկայացվող ժամանակակից պահանջներին համապատասխանեցմանը:<br>Նոր շինարարական նորմերում սահմանվելու են տարբեր տեսակի բետոններից և ամրաններից իրականացվող տարբեր տիպի բետոնե և երկաթբերոնե կոնստրուկցիաների նախագծման համար հիմնական պահանջներ, | 2017թ. | 7000.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | որոնք կիրառվում են արդյունաբերական, քաղաքացիական, տրանսպորտային, հիդրոտեխնիկական և այլ շինարարական օբյեկտներում: Նորմերի պահանջները նպաստելու են նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացմանը, նոր մեթոդական սկզբունքների ներդրմանը, շինարարական արտադրանքների, շենքերի ու շինությունների շահագործման բնութագրերի նորմավորմանը և դրանց ներկայացվող պահանջների սահմանմանը՝ ներառյալ անվտանգության ապահովման պահանջները: | | |
| 4. | Պողպատե կոնստրուկցիաներ (ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում) | Հաշվի առնելով նոր տեխնոլոգիաների կիրառմամբ շինարարության արդիականացման պահանջները | ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե | «Պողպատե կոնստրուկցիաներ» ՀՀ շինարարական նորմերի մշակումը (տեղայնացում) նպատակաուղղված է հանրապետության տարածքում ներկայումս գործող ՍՆիՊ 2.II-23-81* «Պողպատե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերով սահմանված դրույթները պողպատե կոնստրուկցիաների կիրառմամբ նախագծման նոր սկզբունքներին և ժամանակակից պահանջներին համապատասխանեցմանը: | 2017թ. | 5000.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Այն նպաստելու է նոր տեխնոլոգիաների զարգացմանը և արտահանման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացմանը, նոր մեթոդական սկզբունքների ներդրմանը, շինարարական արտադրանքների, շենքերի ու շինությունների շահագործման բնութագրերի նորմավորմանը և դրանց ներկայացվող պահանջների սահմանմանը՝ ներառյալ անվտանգության ապահովման պահանջները: | | |
| Ընդամենը | | | | | | **20,000.0** |

Հավելված N 2
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական
կոմիտեի նախագահի

06 Մարտի 2017թ.
N31 - Ն հրամանի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 04 ԲԱԺՆԻ 08 ԽՄԲԻ 04 ԴԱՍԻ «01. ՆՈՐՄԱՏԻՎԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ» ԾՐԱԳՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| Ծրագրային դասիչը | | Մատուցվող ծառայության անվանումը<br>**Նոր նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում** | Ոչ ֆինանսական ցուցանիշներ | Ֆինանսական ցուցանիշներ |
|---|---|---|---|---|
| 1001 | ԱԾ35 | Նկարագրություն<br>ՀՀ տարածքում միջպետական կարգավիճակով գործող նախկին ԽՍՀՄ-ի նորմերի՝շինարարական նորմերի, ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի, շիննորմերի կանոնների հավաքածուների և այլ փաստաթղթերի մշակում (տեղայնացում,ինչպես նաև միջազգային և եվրոպական նորմերի տեղայնացում, ինչը ներառում է դրանց ռուսերենից և անգլերենից թարգմանություն հայերենի, | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | համապատասխանեցում ՀՀ-ում գործող քաղաքաշինական նորմերին և քաղաքաշինական պրակտիկային | | | | | | | | |
| | Չափորոշիչներ | I եռամսյակ | I կիսամյակ | 9 ամիս | Տարի | I եռամսյակ | I կիսամյակ | 9 ամիս | Տարի |
| Քանակական | **Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (հատ), այդ թվում՝** | 0 | 4 | 4 | 4 | X | X | X | X |
| | 1.Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու (ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածուի մշակում), (տեղայնացում) | | | | | | 1800.0 | 4200.0 | 6000.0 |
| | 2.Հասարակական շենքեր և շինություններ (ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում) | | | | | | 600.0 | 1400.0 | 2000.0 |
| | 3.Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ (ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում) | | | | | | 2100.0 | 4900.0 | 7000.0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4.Պողպատե կոնստրուկցիաներ (ՀՀ շինարարական նորմերի մշակում), (տեղայնացում) | | | | | | 1500.0 | 3500.0 | 5000.0 |
| Որակական | 1-4 Համապատասխանություն տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջներին (տոկոս) | | | | 100.0 | X | X | X | X |
| Ժամկետայնության | Մշակված չէ | | | | | X | X | X | X |
| Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ) | | X | X | X | X | 0 | 6000.0 | 14000.00 | 20000.0 |

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Ծրագիրը կնպաստի քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար անհրաժեշտ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի առավել ամբողջական դաշտի ապահովմանը

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

Պետական գնումների արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը (ները)